ՄԱՐԶԻԿՆԵՐ ԴԱՆԻԵԼ ՄԵԼԻՔԻ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ, ՖԻՆՆ ԿԱՍՊԵՐ ԱԴԱՄ ԷՎԱՐՏ ՍՏԵՆԼԻԻ ԳԵՐԱԳՈՒՍՅԱՆԻՆ, ՎԱԴԻՄ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆԻ ԲԻՉԱԽՉՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

------ ---------- 2025 թ. № -Ա

ՄԱՐԶԻԿՆԵՐ ԴԱՆԻԵԼ ՄԵԼԻՔԻ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ, ՖԻՆՆ ԿԱՍՊԵՐ ԱԴԱՄ ԷՎԱՐՏ ՍՏԵՆԼԻԻ ԳԵՐԱԳՈՒՍՅԱՆԻՆ, ՎԱԴԻՄ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆԻ ԲԻՉԱԽՉՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի № 89-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ ու 2.1-ին ենթակետերով և 3-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականների անդամ հանդիսացող՝

1) Դանիել Մելիքի Աղբալյանին (ծնված՝ 1999 թվականի մարտի 12-ին, զինհաշվառումը՝ Երևանի N 2 Զ/Կ),

2) Ֆինն Կասպեր Ադամ Էվարտ Ստենլիի Գերագուսյանին (ծնված՝ 2007 թվականի հոկտեմբերի 28-ին, զինհաշվառումը՝ Երևանի N 2 Զ/Կ),

3) Վադիմ Արսենի Հարությունյանին (ծնված՝ 2005 թվականի սեպտեմբերի 8-ին, զինհաշվառումը՝ Երևանի N 2 Զ/Կ),

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Վարդան Վահանի Բիչախչյանին (ծնված՝ 1999 թվականի հուլիսի 9-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղանդիլյան փ., շ. 28, բն. 8, զինհաշվառումը՝ Շիրակի մարզի Զ/Կ)՝ ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է ՀՀ կառավարության 23.01.2025 թ. N 68-Ա որոշումով՝ մինչև 26 տարին լրանալը՝ 09.07.2025 թ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ